Կամավորական ազատամարտիկների պահանջները ՀՀ կառավարությանը

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թ. հունիսի 19-ին ընդունված «Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը վերադարձնել ՀՀ Ազգային ժողով՝ նոր քննարկման համար՝ հետևյալ խնդիրները լուծելու նպատակով.

1.1. կամավորական ազատամարտիկներին առանձնացնել մարտական գործողությունների մյուս մասնակիցներից և նրանց տալ հատուկ կարգավիճակ,

1.2. կամավորական ազատամարտիկների կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ հիմքերի ստեղծման պարտավորության կատարումը դնել պետության վրա (ի դեմս համապատասխան պետական կառավարման մարմնի),

1.3. վերանայել օրենքի անվանումը և բացառել կամավոր ազատամարտիկների նույնացումը որևէ կազմակերպության հետ ,

2. վերանայել դրամական և սննդի փոխհատուցման գումարների չափերը,

3. Անկախ սոցիալական ապահովության այլ միջոցներից օգտվելու հանգամանքից սահմանել կենսաթոշակ կրտսեր սպայական կազմի միջին կենսաթոշակի չափով, և ազատամարտիկների մահվան դեպքում նրանց թաղման արարողության կազմակերպումը իրականացնել ըստ բնակության վայրի վարչական շրջանի ադմինիստրացիայի կողմից,

3.1. 100 տոկոսի չափով զոհված կամավորական ազատամարտիկների ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամների (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը) համար,

3.2. 100 տոկոսի չափով 1-ին խմբի հաշմանդամ կամավորական ազատամարտիկների, իսկ մահանալու դեպքում նրանց ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամների (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը) համար,

3.3. 80 տոկոսի չափով՝ 2-րդ խմբի հաշմանդամ կամավորական ազատամարտիկների, իսկ մահանալու դեպքում նրանց ընտանիքների

անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամների (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը) համար,

3.4. 60 տոկոսի չափով՝ 3-րդ խմբի հաշմանդամ կամավորական ազատամարտիկների, իսկ մահանալու դեպքում՝ նրանց ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամների (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը) համար,

3.5. 40 տոկոսի չափով հաշմանդամություն չունեցող կամավորական ազատամարտիկների, իսկ մահանալու դեպքում նրանց ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամների (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը) համար,

3.6. 3.1 ենթակետում նշվածի 2/3-ի չափով՝ զոհված մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամների (ուսանողներին՝ մինչև 26 տարեկան դառնալը) համար,

3.7. 3.2-3.5 ենթակետերում նշվածի 2/3-ի չափով՝ մարտական գործողությունների այլ մասնակիցների համապատասխան կատեգորիաների անձանց, իսկ մահանալու դեպքում՝ նրանց ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամների (ուսանողներին՝ մինչև 26 տարեկան դառնալը) համար:

4. Պարտավորեցնել համապատասխան պետական կառավարման մարմնին կատարել վերահաշվարկ և կամավորական ազատամարտիկներին ու մարտական գործողությունների այլ մասնակիցներին կամ նրանց ընտանիքների անդամներին վճարել չստացած գումարները:

5. Տրամադրել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար օրենքով սահմանված կարգով անվճար հիմունքներով նախատեսված տեսակների բժշկական սպասարկում.

5.1. 100 տոկոս անվճար զոհված կամ ստացած վնասվածքների/հիվանդության հետևանքով հետագայում մահացած կամավորական ազատամարտիկների և մարտական գործողությունների այլ մասնակիցների ընտանիքների

անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամներին (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը),

5.2. 100 տոկոս անվճար 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամ կամավորական ազատամարտիկներին և 1-ին ու 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող մարտական գործողությունների այլ մասնակիցներին, ինչպես նաև նրանց ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամներին (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը),

5.3. 80 տոկոս փոխհատուցմամբ հաշմանդամություն չունեցող կամավորական ազատամարտիկներին և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող մարտական գործողությունների այլ մասնակիցներին,

5.4. 50 տոկոս փոխհատուցմամբ հաշմանդամություն չունեցող կամավորական ազատամարտիկների և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող մարտական գործողությունների այլ մասնակիցների ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամներին (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը),

5.5. 100 տոկոս անվճար՝ կամավորական ազատամարտիկներին և մարտական գործողությունների այլ մասնակիցներին ու նրանց ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամների (ուսանողներին՝ մինչև 26 տարեկան դառնալը)՝ կյանքին վտանգ սպառնացող հիվանդությունների բուժման (վիրահատությունների կատարման) դեպքերում՝ անկախ հաշմանդամության կարգից:

6. Տրամադրել տարին մեկ անգամ անվճար առողջարանային բուժման ուղեգրեր

6.1. 100 տոկոս անվճար՝ 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամ կամավորական ազատամարտիկներին և 1-ին ու 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող մարտական գործողությունների այլ մասնակիցներին,

6.2. 70 տոկոս փոխհատուցմամբ հաշմանդամություն չունեցող կամավորական ազատամարտիկներին և 3-րդ խմբի հաշմանդամ մարտական գործողությունների այլ մասնակիցներին,

6.3. 50 տոկոս փոխհատուցմամբ հաշմանդամություն չունեցող մարտական գործողությունների այլ մասնակիցներին:

7. Տրամադրել կոմունալ վճարումների փոխհատուցում

7.1. 100 տոկոս զոհված կամ մահացած կամավորական ազատամարտիկների և մարտական գործողությունների այլ մասնակիցների ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամներին (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը),

7.2. 100 տոկոս 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամ կամավորական ազատամարտիկներին և 1-ին ու 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող մարտական գործողությունների այլ մասնակիցներին, իսկ մահանալու դեպքում նրանց ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամներին (ուսանողներին մինչև 26 տարեկան դառնալը),

7.3. 80 տոկոս հաշմանդամություն չունեցող կամավորական ազատամարտիկներին և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող մարտական գործողությունների այլ մասնակիցներին,

7.4. 50 տոկոս հաշմանդամություն չունեցած մահացած կամավորական ազատամարտիկների և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող մարտական գործողությունների այլ մասնակիցների ընտանիքների անչափահաս և խնամքի կարիք ունեցող այլ անդամներին (ուսանողներին մինչև 24 տարեկան դառնալը):

8. Տրամադրել ուսման վարձի զեղչ.

8.1. 100 տոկոս 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ կամավորական ազատամարտիկներին և մարտական գործողությունների այլ մասնակիցներին, զոհված, ստացած վնասվածքների/հիվանդության հետևանքով հետագայում մահացած, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամ կամավորական ազատամարտիկների և մարտական գործողությունների այլ մասնակիցների երեխաներին,

8.2. 80 տոկոս 2-րդ խմբի հաշմանդամ կամավորական ազատամարտիկներին ու մարտական գործողությունների այլ մասնակիցներին և նրանց երեխաներին,